# ԹԼԷՕԼ ԴԱՒԻԹԻ ԽԻՔԵԱԹ

1. Օրհնեա՜լ բարերար Աստուած, խնամքը շատ էր մեծ թագաւորուն։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղորմի՝ Աստղիկ թագաւորուն։

Տըրկէն[1] օղորմի մը խաղար օղորմի՝ Սանասարին։

Տըրկէն օղորմի մը կուտամ խաղար օղորմի՝ Ծուռ Պաղտասարին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղար օղորմի՝ Ճոչիկ Մհէրին։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ Ձէնով Յօվանին։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ Թառլան Վէքօյին։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ տղայ Դաւիթին։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ պզտիկ Մհէրին։

Տառնամ օղօրմի մը կուտամ հաղար օղօրմի՝ կապոտ Կողայ թագաւորուն։

Տառնամ օղօրմի մը կուտամ հաղար օղօրմի՝ Սառան խաթունին[2]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ Սիւռաթ խաթունին[3]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ Կիւլիզար խաթունին[4]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի՝ Սինամ խաթունին[5]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի Ճիւտ Կիւլակին[6]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի Խանտիր խաթունին[7]։

Տառնամ օղօրմի մը կուտամ խաղար օղօրմի Քառսուն նօղ ծամին[8]։

---

1 Կրկին. դարձեալ։ 2 Սանասարի մայր։ 3 Սանասարի կին։ 4 Ձէնով Յօվանի կին. 5 Դաւիթի մայր։ 6 Թառլան Վէքօի կին։ 7 Դաւիթի կին։ 8 Դաւիթի զօքանչ. Կապուտ Կողայ Թագաւորի կին։